ԱԼԲԵՐՏ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՕՊԵԿ-Ը ԵՎ ԻՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1970ԹԹ.

1960թ. ստեղծվեց նավթ արտահանող երկրների կազմակերպությունը՝ ՕՊԵԿ-ը, որի ստեղծման նախադրյալները համաշխարհային նավթային կարտելի անդամ գերիզոր ընկերությունների վարած թալանչիական քաղաքականությունն էր Պարսից Ծոցի շրջանի և այլ նավթարդյունաբերող երկրների նկատմամբ:

Միջազգային նավթային կարտելը, որը 1970-ական թթ. սկզբին իր հսկողության տակ էր պահում կապիտալիստական աշխարհի նավթի պաշարների 70%-ը, արդյունահանման 65%-ը և վերամշակման ու վաճառքի 50%-ից ավելին, ընդգրկում էր հինգ ամերիկյան նավթային հզորագույն մոնոպոլիաները՝ «Էքսոն», «Թեքսակո», «Ստանդարտ օյլ օֆ Քալիֆորնիա», «Սոբիլ Օյլ», «Գալֆ Օյլ», անգլիական «Բրիթիշ Փեթրոլեում» և անգլո-հոլանդական «Ռոյալ Դաթչ Շելլ» ընկերությունները, որոնց գերիշխանության հիմքն էին կազմում կոնցեսիաների տեսքով կամ անհավասար պայմաններով ձեռք բերված նավթի շահագործման պայմանագրերը՝ նավթով հարուստ զարգացող երկրներից[1]:

1950-ական թթ. երկրորդ կեսից Մերձավոր և Միջին Արևելքում արդյունահանվող նավթի մեծ մասը արտահանվում էր ԱՄՆ, որտեղ արդյունահանման ծախսերը շուրջ տասն անգամ գերազանցում էին Մերձավոր և Միջինարևելյան նավթի արդյունահանման ծախսերը: Էժան գնով նավթի մեծաքանակ ներմուծումը, որը նավթային ընկերություններին խոշոր շահույթներ էր բերում, ԱՄՆ-ում առաջացրեց նավթի պաշարների լճացում[2]: Ամերիկյան արդյունահանման մեծ ծախսեր պահանջող նավթը չդիմացավ ներմուծվող էժան նավթի մրցակցությանը: Բացի դրանից, ամերիկյան նավթահորերից նավթի արդյունահանումը դառնում էր տնտեսապես ոչ շահավետ, ինչի դեմ պայքար էին ծավալել ամերիկյան տեղական նավթ արդյունահանող ընկերությունները: Ի վերջո ԱՄՆ-ի կառավարությունը 1959թ. որոշում ընդունեց քանակային սահմանափակումներ մտցնել ներմուծումների չափերի վրա և նախորդ տարվա ներմուծման չափերի համեմատ 12%-ով կրճատել[3]:

Ամերիկյան ընդարձակ շուկա ներմուծվող նավթի չափերի կրճատումը ավելի բարդացրեց իրավիճակը: Չսպառվող նավթը լճացվեց համաշխարհային

նավթային շուկայում: Այս պայմաններում նավթի իրական գները ավելի սկսեցին տարբերվել հաստատուն գներից: Հաստատուն գներից կատարվող զեղչերը հասան մինչև 25% և ավելին[4]: Որպեսզի հաստատուն գները հավասարեցնեն շուկայական գներին և կրճատեն նավթարդյունաբերող երկրների վճարումները, նավթային մենաշնորհները 1959թ. Մերձավոր և Միջին Արևելյան ու Վենեսուելայի նավթի գների իջեցում հայտարարեցին: Միայն Վենեսուելան այդ իջեցումից 1959թ. տուժեց $140մլն[5]:

Այս իրադարձությանը «Փեթրոլեում փրեսս սերվիզ» ամսագիրը արձագանքեց հետևյալ կերպ. «Վերջերս տեղի ունեցած նավթի գների իջեցումը կատարվեց նավթի և նավթամթերքների հաստատուն գների կարգավորման նպատակով, ինչը հնարավորություն կընձեռի ավելացնել նավթարդյունաբերող երկրների շահույթը: Բացի դրանից իջեցումները նպատակաուղղված են հաստատուն գների գեղչերի պրակտիկայի վերացմանը, ինչի հետևանքով նավթային ընկերությունները ստիպված են նավթարդյունահանող երկրներին հարկեր վճարել ոչ թե իրական սպառման գներից, այլև հաստատուն գներից»[6]: Իհարկե ակնհայտ է, որ իջեցումները բխում էին հենց մենաշնորհների շահերից, որոնք ուղղակիորեն ստիպված էին ավելի շատ հարկ վճարել, քանի որ հաստատուն գները, որոնք հարկերի վճարման հիմքն էին կազմում, ավելի բարձր էին քան իրական վաճառքի գները:

«Ստանդարտ Օյլ օֆ Նյու Ջերսի» ընկերության մասնաճյուղերից մեկի՝ «էՍՍՕ» ընկերության ղեկավարները նավթի գների իջեցումը պատճառաբանում էին նույնիսկ ԽՍՀՄ-ի կողմից նավթի դեմպինգային արժեքով մեծաքանակ արտահանման հետ[7], ինչը այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, քանի որ խորհրդային նավթի դերը համաշխարհային կապիտալիստական նավթի շուկայի պահանջների ապահովման հարցում չնչին էր և ազդեցություն չէր գործում նավթի համաշխարհային գների գոյացման վրա[8]:

Նավթի գների իջեցման որոշումը դժգոհությունների մեծ ալիք առաջացրեց Վենեսուելայում և արաբական աշխարհում: 1959թ. ապրիլին Կահիրեյում հրավիրվեց նախադեպը չունեցող I Արաբական նավթային կոնգրեսը, որտեղ Իրանն ու Վենեսուելան մասնակցեցին որպես դիտորդներ: Իրանը ներկայացնում էր ԻԱՆԸ-ի ներկայացուցիչ Մանուչեհր Ֆարմանֆարմայանը, իսկ Վենեսուելան՝ նավթի նախարար Խուան Պերեզ Ալֆոնսոն[9]:

Առաջին նավթային կոնգրեսում ոգեշնչող ելույթներ ունեցան Խուան Պերեզ Ալֆոնսոն և Եգիպտոսի նախագահ Նասերը, որոնք նավթարդյու-

նաբերող երկրներին կոչ արեցին համախմբվել և միմյանց հետ պայքարել ընդդեմ նավթային մոնոպոլիաների: Կոնգրեսի վերջում մասնակիցները միմյանց հետ համագործակցելու նպատակով ստորագրեցին «ջենթելմենական» համաձայնագիր, որն էլ հիմք հանդիսացավ հաջորդ տարի ՕՊԵԿ-ի ստեղծմանը[10]:

1960թ. կրկին իջեցվեցին նավթի գները, ինչը նշանակում էր, որ այդ շրջանի խոշոր երկրներից Սաուդյան Արաբիան, Վենեսուելան, Իրանը և Իրաքը ընդամենը մեկ ամսվա ընթացքում կորցնում էին $90մլն: Ընդհանուր առմամբ 1959-1960թթ. նավթի գները նվազեցին 27 ցենտով յուրաքանչյուր բարելի համար, ինչը կազմում էր ընդհանուր արժեքի 11-14%՝ կախված հաստատուն գների չափից: Որպես հետևանք այդ երկրները սկսեցին տարեկան $400մլն. պակաս գումար ստանալ որը 1961-1970թթ. ընթացքում կազմեց $4 մլրդ[11]:

Այդ գումարները շատ կարևոր նշանակություն ունեին նավթարդյունահանող երկրների համար, որոնց բյուջեների հիմնական աղբյուրը, տնտեսությունների և զարգացման ծրագրերի ֆինանսավորման միջոցը հենց նավթից ստացվող եկամուտներ էին:

1960թ. սեպտեմբերի 5-ին Իրաքի կառավարությունը գեներալ Աբդել Քասեմի գլխավորությամբ Բաղդադում նավթարդյունաբերող երկրների կոնֆերանս հրավիրեց: Կոնֆերանսը, քննարկելով համաշխարհային նավթի շուկայում մենաշնորհների քաղաքականության հետևանքով ստեղծված իրավիճակը և որոշելով այդուհետ միահամուռ կերպով հանդես գալ, որպեսզի մոնոպոլիաները չկարողանան երկրները միմյանց դեմ գրգռել, եկավ միաձայն եզրակացության՝ ստեղծել նավթարդյունաբերող երկրների մի հատուկ մարմին, որը ինչպես արդեն նշվել է, կոչվեց ՕՊԵԿ[12]: ՕՊԵԿ-ի առաջին անդամ-հիմնադիրները հանդիսացան Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Վենեսուելան: Հիմնադիր անդամների քանակի սահմանափակ լինելը պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակ երկրների կառավարությունները վստահ չէին, որ հնարավոր է պայքարել նավթային կարտելի դեմ: Հետագայում ՕՊԵԿ-ի հեղինակության բարձրացման հետ մեկտեղ նրան անդամակցեցին նաև Կատարը, Ինդոնեզիան, Լիբիան, Աբու - Դաբին, Ալժիրը, Նիգերիան, Էկվադորն ու Գաբոնը[13]:

Ինչպես հետևում էր ՕՊԵԿ-ի առաջին իսկ կոնֆերանսից, կազմակերպության գլխավոր նպատակն էր, «անդամ-պետությունների նավթային

քաղաքականության համակարգումն ու միասնականացումը և նրանց շահերի պաշտպանումը ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ հիմքերի վրա»[14]:

1960թ. I կոնֆերանսի ընդունած բանաձևում կազմակերպության անդամները հայտարարեցին, որ իրենք այլևս չեն կարող անտարբեր մնալ մոնոպոլիաների վարած գնային քաղաքականության նկատմամբ և կպահանջեն այդ ընկերություններից կայուն գներ հաստատել նավթային շուկայում[15]:

ՕՊԵԿ-ի ստեղծման սկզբնական շրջանում համաշխարհային նավթային կարտելի անդամները լուրջ չէին մոտենում այդ կազմակերպության գործունեությանը և հաշվի առնելով անդամ պետությունների միջև եղած տարաձայնությունները՝ հույս էին փայփայում, որ այն շատ արագ կփլուզվի:

Սակայն ՕՊԵԿ-ի դիրքերի հետագա ամրապնդումը և նրա համաշխարհային վարկանիշի բարձրացումը ստիպեցին նավթային մենաշնորհատերերին փոխել իրենց կարծիքը և հաշվի նստել այդ կառույցի հետ: Աստիճանաբար ՕՊԵԿ-ը արժանացավ միջազգային ճանաչման, իսկ 1962թ. նոյեմբերի 6-ին այն գրանցվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունում որպես միջկառավարական լիիրավ կազմակերպություն[16]:

Օտարերկրյա ընկերությունները երկար ժամանակ հրաժարվում էին ընդունել ՕՊԵԿ-ի առաջարկները, քանի որ յուրաքանչյուր զիջում նրանց համար ավելի վտանգավոր էր, քան իրենց եկամտի մի մասի կորուստը: Մոնոպոլիաները չէին ցանկանում նախադեպ ստեղծել, որի հիման վրա ՕՊԵԿ-ի անդամները կարող էին նոր զիջումներ պահանջել, որի պատճառով նրանք ամեն կերպ հետաձգում էին բանակցությունները և անընդմեջ փոխում իրենց իսկ կողմից անընդունելի պայմաններով կատարված առաջարկները:

1960-ական թթ. սկզբից Իրանի ղեկավար շրջանները սկսեցին ՄՆԿ-ի մեջ մտնող նավթային մենաշնորհներից պահանջել չխախտել համաձայնագրի ֆինանսական պայմանները և պահպանել իրենց երկրի տնտեսական շահերը: Նավթարդյունաբերող երկրների և ՕՊԵԿ-ի դիրքերի հետագա ամրապնդումը համաշխարհային նավթային թատերաբեմում հնարավորություն տվեց Իրանին 1960-ական թթ. բանակցություններ սկսել ՄՆԿ-ի հետ՝ միմյանց միջև պայմանագրի պայմանների վերանայման խնդրի շուրջ: Իրանի կառավարության հիմնական պահանջներն էին ավելացնել Իրանի բաժինը նավթի եկամուտներից, մեծացնել արդյունահանման ծավալները և կրճատել կոնսորցիումի պայմանագրի տարածքները[17]:

Այսպես, Պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյաների և ՄՆԿ-ի անդամ ամերիկյան նավթային ընկերությունների ղեկավարների հետ 1966թ. հոկտեմբերի 24-ի հանդիպման ժամանակ ընկերություններից մեկի ղեկավարը, նշելով Իրանի կողմից ստացվող ռազմական օգնությունների, զարգացման ծրագրերի ֆինասավորման, վարկերի տրամադրման փաստերը, իր երկիր պահանջեց զրկել Իրանին այդ ամենից, եթե վերջինս կոնսորցիումի դեմ քայլեր ձեռնարկի: Նավթային մենաշնորհներին շատ էր անհանգստացնում այն հարցը, թե ու՞մ մտահոգմամբ էին իրագործվում այդ ճնշումները՝ Մոհամմեդ Ռեզա շահի, որը երկրի նավթային քաղաքականությունը իր անձնական հսկողության տակ էր պահում, թե՞ ԻԱՆԸ-ի ղեկավար դոկտոր էդբալի անձնական նախաձեռնությամբ[18]: Ավելի հավանական է, որ այդ կարևոր իրադարձությունները կարող էին իրագործելի լինել շահի ղեկավարությամբ և հսկողության ներքո:

Դեռևս 1960-ական թթ. առաջին կեսից Իրանը ՄՆԿ-ից սկսել էր հոնորարների հետ մեկտեղ լրացուցիչ գումարներ ստանալ: 1965թ սկզբին համաձայն կոնսորցիումի հետ լրացուցիչ պայմանագրի Իրանը որպես բաժնետեր պետք է ստանար ևս 4 ցենտ յուրաքանչյուր նավթի բարելի դիմաց, որը 1966թ. դարձավ 4,5 ցենտ, ինչի հետևանքով 1965թ. գարնանը Իրանը ստացավ առաջին $25 մլն[19]:

1966թ Իրանի և ՄՆԿ-ի միջև կնքվեց ևս մեկ լրացուցիչ համաձայնագիր, ըստ որի՝ ՄՆԿ-ը հոգուտ ԻԱՆԸ-ի հրաժարվեց իր տարածքների 25%-ից, որը կազմում էր 65.000 կմ^2: Բանդար Բուշեհրի և Բանդար Աբբասի այդ շրջաններում հետագայում սկսեցին գործել համատեղ նավթային ընկերությունները: Ինչպես նաև ԻԱՆԸ-ը իրավունք ստացավ ներքին պահանջները բավարարելուց զատ 10 տարվա ընթացքում ՄՆԿ-ից գնել ևս 80մլն. տոննա նավթ[20]:

Այդ ժամանակ Իրանի կառավարությունը կոնսորցիումից պահանջեց ավելացնել նավթի արդյունահանումը տարեկան 17%-ով՝ դիտելով այդ որպես երկրի եկամուտների ավելացման աղբյուր: Սակայն կոնսորցիումը 1966-1967թթ. երաշխավորում էր այն բարձրացնել միայն 11-13%-ով: 1960-ականների վերջին Իրանի կառավարությունը, կրկին ճնշում գործադրելով ՄՆԿ-ի վրա, սկսեց նրանից ստանալ վարկեր նավթի հետագա արդյունահանման հաշվին: Այդպես 1969թ. երկիրը ստացավ $80 մլն., իսկ 1971թ. $90 մլն[21]:

Մոհամմեդ Ռեզա շահը շարունակում էր ճնշումներ գործադրել ՄՆԿ-ի վրա՝ պահանջելով ավելացնել նավթի արդյունահանումը և երկրի եկամուտները: 1967թ. արաբա-իսրաելյան պատերազմի ժամանակ կոնսորցիումը

22%-ով ավելացրեց իրանական նավթի արդյունահանման չափերը, որպեսզի լրացնի արաբների նավթային էմբարգոյի հետևանքով առաջացած պակասը: Կարճատև պատերազմի ավարտից հետո արաբները վերականգնեցին իրենց արդյունահանման նախկին չափերը:

1968թ. փետրվարի 3-ին ԻԱՆԸ-ը կոնսորցիումին մի նամակ հղեց, որի միջոցով պահանջում էր Իրանին գումարներ տրամադրել Չորրորդ Զարգացման Ծրագրի իրականացման համար: Այսպիսով շահը ցանկանում էր կոնսորցիումին հասկացնել, որ եթե ՄՆԿ-ը չի ցանկանում ավելացնել արդյունահանման չափերը, որպեսզի ապահովի երկրի ծախսերը, ապա այն պետք է տրամադրի համապատասխան գումարներ[22]:

1968թ. մարտի 28-ին պետքարտուղարի օգնական Ռոսթոուն հանդիպեց «էքսոն» ընկերության նախագահ Լ.Կ.Զամիեսոնի և կոնսորցիումի անդամ այլ ամերիկյան ընկերությունների նախագահների հետ: Հանդիպման ժամանակ նա ուղղակիորեն ասաց. «Վարչությունը չի միջամտում նավթային ընկերությունների կոմերցիոն հարցերին, բայց Իրանի հետ ստեղծված խնդրի կարգավորման հարցում կոնսորցիումի անդամները պետք է այդ երկրի շահերը վեր դասեն սեփական շահերից, որպեսզի չխոչընդոտեն երկու երկրների հարաբերությունների զարգացմանը: Պետդեպարտամենտը կարծում է, որ Ռուսաստանը կօժանդակի արաբներին՝ ակնակալելով իր ձեռքը վերցնել Միջին Արևելյան նավթի գերիշխանությունը. Քանի որ Իրանը ամենահզոր պետությունն է տարածաշրջանում, ԱՄՆ-ի համար շատ կարևոր էր պահպանել այդ երկրում և ունենալ նրա հետ սերտ հարաբերություններ»[23]:

ԱՄՆ-ի մտավախությունը հավանաբար այն էր , որ յուրաքանչյուր պահ հերթական արաբա-իսրաելյան պատերազմը կարող էր բռնկվել, և շահը կարող էր օժանդակել արաբների էմբարգոյին՝ պատժելու համար ամերիկյան ընկերություններին, որոնք չէին բավարարել իր գումարային պահանջները: Պետդեպարտամենտը նույնիսկ դիմեց բրիտանական կառավարությանը, որպեսզի այն խնդրի «Բրիթիշ փեթրոլեումին» պակասեցնել Աբու-Դաբիում և Օմանում նավթի արդյունահանման չափերը հօգուտ Իրանի:

1969թ. Մոհամմեդ Ռեզա շահը կոնսորցիումին վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով խնդրի վերջնական լուծումը մինչև 1969թ. մայիսի 10-ը[24], և հաղթանակեց: ՄՆԿ-ը համաձայնվեց բարձրացնել արդյունահանման չափերը, Իրանին ապառիկ կարգով գումարներ տրամադրել դեռ չարդյունահանված նավթի և $1 մլրդ. պետական բյուջեի պակասուրդի լրացման համար: Մայիսի

14-ին ԻՍՆԸ-ն և «Բրիթիշ Փեթրոլեումի» ղեկավարներ դոկտոր Էդբալը և Դեվիդ Սթիլը կնքեցին համաձայնագիրը[25]:

Այս համաձայնագրին շատ արագ արձագանքեցին Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, որոնք չէին հանդուրժում նավթային կարտելի անդամների կողմից Իրանի նկատմամբ մեղմ քաղաքականություն վարելու և նրա պահանջները ընդունելու փաստը, ինչի հետևանքով պետք է կրճատվեին իրենց երկրների արդյունահանման չափերը:

1969թ. հոկտեմբերին Լոնդոնում բանակցությունների նոր շրջան սկսվեց, որոնց ժամանակ Իրանի կառավարությունը կրկին պահանջեց ավելացնել նավթի եկամուտների չափերը՝ արդյունահանումը ավելացնելու միջոցով: Իրանի կառավարության անդամների կարծիքով՝ այն պետք է կազմեր $1156մլն: Իրանական կողմը ՄՆԿ-ից պահանջում էր նաև Սիվազից Թուրքիայի Իսքենդերուն նավահանգիստ նավթամուղ կառուցել[26]:

Այդուհանդերձ, Մոհամմեդ Ռեզա շահը արևմտյան պետությունների հետ իր հարաբերությունների բարելավմանը չխոչընդոտելու նպատակով դեռ չէր ցանկանում ՄՆԿ-ից կապիտալի մասնաբաժին պահանջել, որին անընդմեջ ձգտում էին ՕՊԵԿ-ի անդամ այլ պետությունները:

1972թ. Լոնդոնում մամուլի ասուլիսի ժամանակ շահը հայտարարեց, որ Իրանի կառավարությունը որոշել է ՄՆԿ-ի համաձայնագրի ժամկետը երկարացնել ևս երեք հնգամյակով: Ցանկանալով նպաստել հարաբերությունների ամրապնդմանը՝ շահը հայտարարեց, թե ՄՆԿ-ի հետ համաձայնագիրը ձեռնտու է իր երկրին, և նա չի պատրաստվում մասնաբաժին պահանջել ՄՆԿ-ից: Սակայն նա պնդեց, որ Իրանը շարունակելու էր պահանջել եկամուտների մեծացում և հաշվարկների համակարգի փոփոխություններ[27]: Այս քայլով Իրանը, փաստորեն, չէր հետևում Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և այլ պետությունների կողմից տարվող հիմնական կապիտալի մասնաբաժին ձեռք բերելու ուղղությանը:

Սակայն 1973թ հունվարին «Սպիտակ հեղափոխության» տասնամյակի առիթով շահը հայտարարեց, որ 1979թ. Իրանը իր համաձայնագիրը ՄՆԿ-ի հետ չի երկարաձգի, և եթե կոնսորցիումի անդամները չհամաձայնվեն համապատասխան կապիտալ ներդնել, որպեսզի ավելացնեն նավթի արդյունահանման չափերը մեկ օրում 5մլն. բարելից 8մլն. բարելի, ապա ինքը այդ ներդրումները կանի և կսկսի ինքնուրույն նավթ արդյունահանել[28]:

Մեր կարծիքով, հաշվի առնելով նավթային կարտելի անդամների միջև ներքին մրցակցության սրվելը և մյուս կողմից՝ արևմտագերմանական, ֆրանսիական, իտալական և ճապոնական ընկերությունների մրցակցությունը, ինչպես նաև 1973թ էներգետիկ ճգնաժամային վիճակը՝ շահի այդ ծրագրերը կարող էին իրականություն դառնալ:

Չնայած նավթային եկամուտները իրենցից մեծ գումարներ էին ներկայացնում և շարունակում էին հանդիսանալ պետական բյուջեի եկամտի հիմնական աղբյուրը, Իրանի ղեկավարությունը Արևմուտքի նավթային գերիշխող ընկերությունների և նրանց կառավարությունների հետ հակամարտության մեջ մտնելով, նպատակադրված ձգտեց ավելացնել ՄՆԿ-ից ստացվող շահույթի չափը, ինչը նախկինում շատ անհավանական էր թվում, և շուտով վերջնականապես դրեց Իրանում ՄՆԿ-ին պատկանող կազմակերպությունների ամբողջ նավթարդյունաբերության ազգայնացման հարցը: Իսկ կապիտալիստական խոշոր պետությունները և, հատկապես, ԱՄՆ-ը հանդուրժեցին Իրանի կառավարության նմանատիպ քայլերը այն պատճառով, որ Իրանը, ունենալով գաղափարական և քաղաքական ընդհանրություններ, Արևմուտքի հետ, կարող էր Պարսից Ծոցում կապիտալիստական երկրների շահերի պաշտպան և Խորհրդային Ռուսաստանի ազդեցության տարածմանը խանգարող ուժ հանդիսանալ: Հատկանշական է նաև, որ Պարսից Ծոցից բրիտանական ռազմական նավատորմիղի հեռանալուց հետո ակնկալվում էր, որ Իրանը կստանձնի Ծոցի անվտանգությունը ապահովող հսկիչ-պահապանի դերը:

Այսպիսով, 1970-ական թթ. առաջին կեսը կարելի է համարել նավթարդյունաբերող երկրների և Միջազգային նավթային կարտելի անդամների միջև նավթի հետ կապված հարաբերություններում բեկումնային ժամանակա-շրջան:

---

1. Примаков А.Е., Персидский залив: Нефть и монополии, М.,1983, с. 12.
2. Соловьев Б., Успех нефтедобывающих стран, Азия и Африка сегодня, 1971, N 7, с. 33-34.
3. Шевалье Ж.М, Нефтяной кризиз, М., 1975, с. 68.
4. Fesharaki F., Development of the Iranian Oil Industry: International and Domestic Aspects, N Y., 1976, p 97.
5. Комлев Л.И., В борьбе с нефтяными спрутами, М., 1976, с. 53.
6. Petroleum Press Service, 1959, March, p 87/Андреасян Р.Н., Эльянов А.Я., Ближний Восток. Нефть и независимость, М., 1961, с. 106.
7. Levy J.W., Oil Power, Foreign Affairs, 1971, vol 49, N 4, p. 665.
8. Ասիայի և Արևմտյան Եվրոպայի նավթի շուկայում ԽՍՀՄ-ի արտահանման բաժինը 1960-ական թթ. սկզբին կազմում էր ընդամենը 4%, իսկ նավթային

կարտելի բաժինը՝ 80%, Андреасян Р.Н., Эльянов А.Я., Ближний Восток. Нефть и независимость, ЭЯн. iЯЛ., їз 105:
9. متوجر فرمانفرمائیان و رحسان فرمانفرمائیان، خون و نفت، خاطرات یک شاهزاده ایران، تهران،1378 ص 339
10. Նույն տեղում, էջ 342:
11. Комлев Л.И., Նշվ. աշխ., էջ 53:
12. Андреасян Р.Н., Казюков А.Д., ОПЕК. В мире нефти, М., 1978, с.15.
13. www.opec.org
14. Agreement Concerning the Creation of the Organization of the Petroleum Exporting Countries, done Sept. 14. 1960, 43 U.N.T.S. 247/ Peterson J.E., The Politics of Middle Eastern Oil, W., 1983, p.40.
15. Андреасян Р.Н., Казюков А.Д., ОПЕК. В мире нефти, Նշվ. աշխ., էջ 100:
16. Ajomo M.A., An Appraisal of the Organization of the Petroleum Exporting Countries, Peterson J.E., The Politics of Middle Eastern Oil, W., 1983, p.52.
17. Шарипов У.З., Эволюция нефтяной политики иранского государства в 50-70 годы, Иран. Проблемы экономического и социального развития в 60-70-е годы, М., 1980, с. 65.
18. Stobaugh R., The Evolution of Iranian Oil Policy, 1925-1975; Iran Under The Pahlavis, Stanford, 1978, p 230.
19. اطلاعات 12.01.1965.
20. Fesharaki F., Նշվ. աշխ., էջ 102.
21. اینکال 19.06.1965.
22. Stobaugh R., The Evolution of Iranian Oil Policy, 1925-1975; Նշվ. աշխ., էջ 232:
23. Kissinger H., Years of upheaval, C., 1982, p 314.
24. Intelligence Note 361 from the Director of the Bureau of Intelligence and Research (Hughes) to Secretary of State Rogers, Washington, May 9, 1969. Foreign Relations, 1969-1976, V. E-4, Documents on Iran and Iraq/ http://www state.gov/r/pa/ho/frus/Nixon/e4/65010.htm
25. New York Times, 16.05.1969.
26. کیهان 08.10.1969
27. Пензин Д., Нефть и независимость, Международная жизнь, 1972, N9, с. 53.
28. کیهان 26.01.1973.